

**ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի
2018թ. ապրիլի 27-ին կայացած նիստի**

Նախագահությամբ՝ ռեկտոր Ա.Լոքյանի

Քարտուղարությամբ՝ գիտական քարտուղար Հ.Ստեփանյանի

Մասնակցությամբ՝ գիտական խորհրդի անդամների (ներկայության թերթիկը կցվում է)

Օրակարգ՝

1. Տեղեկատվական համակարգերի սպասարկման եվ զարգացման բաժնի ընթացիկ տարվա կատարած աշխատանքների հաշվետվություն:
Զեկուցող՝ բաժնի պետ Ա.Դավթյան
2. Անձնակազմի կառավարման և ընդհանուր բաժնի ընթացիկ տարվա կատարած աշխատանքների հաշվետվություն:
Զեկուցող՝ բաժնի պետ Ա.Հովհաննիսյան
3. Ընթացիկ հարց: ՀՀ պետական կառավարման ակադեմիայի Իրավագիտության ամբիոնի հայցորդ Վախթանգ Սևանի Բարայանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը:
Զեկուցող՝ ամբիոնի վարիչ Ա.Եզեկյան
4. Ընթացիկ հարց: «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության հեռավար (դիստանցիոն) ուսուցման կենտրոնի կանոնադրության հաստատման հարցը:
Զեկուցող՝ ռեկտոր Ա.Լոքյան
5. Ընթացիկ հարց: Քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնի դասախոս Մամիկոն Գարեգինի Մարգարյանին ԻԳ.00.00-«Քաղաքագիտություն» մասնագիտությամբ դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցը:
Զեկուցող՝ գիտական քարտուղար Հ.Ստեփանյան

1. Լսեցին՝ Տեղեկատվական համակարգերի սպասարկման եվ զարգացման բաժնի ընթացիկ տարվա կատարած աշխատանքների հաշվետվություն:
Զեկուցող՝ բաժնի պետ Ա.Դավթյան

Արտահայտվեցին՝ Ա.Լոքյանը, Գ.Չատինյանը, Հ.Ստեփանյանը:

Որոշեցին՝ Տեղեկատվական համակարգերի սպասարկման եվ զարգացման բաժնի ընթացիկ տարվա կատարած աշխատանքները գնահատել բավարար (հաշվետվությունը կից ներկայացվում է):

2. Լսեցին՝ Անձնակազմի կառավարման և ընդհանուր բաժնի ընթացիկ տարվա կատարած աշխատանքների հաշվետվություն:
Զեկուցող՝ բաժնի պետ Ա.Հովհաննիսյան

Արտահայտվեցին՝ Գ.Զատինյանը, Գ.Ադամյանը, Վ.Խաչատրյանը:

Որոշեցին՝ Անձնակազմի կառավարման և ընդհանուր բաժնի ընթացիկ տարվա կատարած աշխատանքները գնահատել բավարար (հաշվետվությունը կից ներկայացվում է):

3. Լսեցին՝ Ընթացիկ հարց: ՀՀ պետական կառավարման ակադեմիայի Իրավագիտության ամբիոնի հայցորդ Վախթանգ Սևանի Բաբայանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը:

Զեկուցող՝ ամբիոնի վարիչ Ա.Եզեկյան:

Զեկուցողը նշեց, որ իրավագիտության ամբիոնում 18.04.2018թ. կայացած ամբիոնի նիստում քննարկվել է ամբիոնի հայցորդ Վախթանգ Սևանի Բաբայանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը և ամբիոնի նիստում կայացրած որոշմամբ միջնորդում են գիտական խորհրդի Վախթանգ Սևանի Բաբայանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Սոցիալական ապահովության սահմանադրական հիմնադրույթների իրացումը» վերտառությամբ՝ ԺԲ.00.02 «Հանրային իրավունք» մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել իրավագիտության դոկտոր Ռուզաննա Խաչիկի Հակոբյանին:

Արտահայտվեցին՝ Ա.Եզեկյանը, Հ.Ստեփանյանը, Գ.Հովհաննիսյանը:

Որոշեցին՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի հայցորդ Վախթանգ Սևանի Բաբայանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Սոցիալական ապահովության սահմանադրական հիմնադրույթների իրացումը» վերտառությամբ՝ ԺԲ.00.02 «Հանրային իրավունք» մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել իրավագիտության դոկտոր Ռուզաննա Խաչիկի Հակոբյանին:

4. Լսեցին՝ Ընթացիկ հարց: «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության հեռավար (դիստանցիոն) ուսուցման կենտրոնի կանոնադրության հաստատման հարցը:

Զեկուցող՝ ռեկտոր Ա.Լոքյան

Զեկուցողը նշեց, որ «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության հեռավար (դիստանցիոն) ուսուցման կենտրոնի կանոնադրության դրույթների հստակեցման համար կազմակերպվել են քննարկումներ, նախօրոք ներկայացվել է գիտական խորհրդի անդամներին գրավոր առաջարկներ և նկատառումներ ներկայացնելու համար: Ներկա պահին որևէ առաջարկ կամ նկատառում չի ներկայացվել, ուստի առաջարկում են հաստատել սույն կանոնադրությունը (կից ներկայացվում է):

Արտահայտվեցին՝ Ա.Եզեկյանը, Ա.Լոքյանը:

Որոշեցին՝ Հաստատել «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության հեռավար (դիստանցիոն) ուսուցման կենտրոնի կանոնադրությունը:

5. Լսեցին՝ Ընթացիկ հարց: Քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնի դասախոս Մամիկոն Գարեգինի Մարգարյանին ԻԳ.00.00-«Քաղաքագիտություն» մասնագիտությամբ դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցը:

Ձեկուցող՝ գիտական քարտուղար Հ.Ստեփանյան:

Հ.Ստեփանյանը նշեց, որ քաղաքական կառավարման և և հանրային քաղաքականության ամբիոնի դասախոս Մամիկոն Գարեգինի Մարգարյանի ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2001թ. հունիսի 9-ի թիվ 615 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգ»-ի 5-րդ մասի Բ ենթակետի պահանջներին:

Մ.Մարգարյանը 2012թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը: Թեկնածուական ատենախոսության պաշտպանությունից հետո հրատարակել է 1 մենագրություն, 1 մեթոդական ուղեցույց, 6 գիտական հոդված: Մ.Մարգարյանը 2012 թվականի հոկտեմբերից առ այսօր դասավանդում է «Քաղաքական գործընթացների մոդելավորում», «Ազգային անվտանգություն» առարկաները՝ ժամավճարային հիմունքներով:

Արտահայտվեցին՝ Քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնի վարիչ Մ.Մարգարյանը: Նա նշեց, որ Մ.Մարգարյանը որպես դասախոս ակտիվորեն մասնակցում է ամբիոնում իրականացվող գիտական և ուսումնամեթոդական աշխատանքներին, շատ սիրված է ուսանողների կողմից:

Այնուհետև ակադեմիայի գիտական խորհրդի նիստի նախագահ Ա. Լոքյանը մատնանշեց, որ Մ.Մարգարյանն իր աշխատանքն իրականացնում է բարեխղճորեն և արժանի է հայցվող գիտական կոչմանը, ուստի առաջարկեց իրականացնել գաղտնի քվեարկություն՝ հաշվիչ հանձնաժողովի հետևյալ կազմով՝

1. Խաչատուր Բեգիրջյան՝ նախագահ
2. Արտակ Բաղդասարյան՝ անդամ
3. Արմենակ Այվազյան՝ անդամ

Բաց քվեարկությամբ հաստատվեց նշված կազմը:

Գաղտնի քվեարկությունից հետո հաշվիչ հանձնաժողովի նախագահ Խ.Բեգիրջյանը ներկայացրեց քվեարկության արդյունքները: Քվեարկության արդյունքներն են՝ գիտական խորհրդի 25 անդամներից նիստին մասնակցել են 21-ը, որից կողմ՝ 21, դեմ՝ 0, անվավեր՝ 0 (կից ներկայացվում է հաշվիչ հանձնաժողովի նիստի N°1 արձանագրությունը):

Այնուհետև բաց քվեարկությամբ հաստատվեց գաղտնի քվեարկության արդյունքները: Քվեարկությունն անցավ միաձայն:

Որոշեցին՝

1. Հաշվի առնելով, որ Քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնի դասախոս, քաղաքական գիտությունների թեկնածու Մամիկոն Մարգարյանի կատարած գիտամանկավարժական և ուսումնամեթոդական աշխատանքները համապատասխանում են ՀՀ կառավարության 2001թ. հունիսի 9-ի թիվ 615 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգ»-ի 5-րդ մասի Բ ենթակետի

պահանջներին՝ Մամիկոն Գարեգինի Մարգարյանին շնորհել դոցենտի գիտական կոչում՝
ԻԳ.00.00- «Քաղաքագիտություն» մասնագիտությամբ:

2. Միջնորդել ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովին՝ հաստատելու սույն
որոշումը:

Գիտական խորհրդի նիստի նախագահ՝

Ա.Լոքյան

Գիտական խորհրդի նիստի քարտուղար՝

Հ.Ստեփանյան

27 ապրիլի 2018թ.

Կ.Տ.